ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՆՆԱ ԱՇՈՏԻ

ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Ս.Ա.Մարության**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ. Թ. Ասատրյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Վ.Հովհաննիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունիսի 27-ին ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. մայիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ա. Հ. Սվաջյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Իմացական հետաքրքրությունների զարգացման, մտավոր և աշխարհաճանաչման գործունեության ակտիվացման հիմնահարցերը մշտապես գտնվում են տարիքային մանկավարժության և հոգեբանության կիզակետում՝ ենթադրելով սկզբնական կրթության բարելավման ժամանակակից մոտեցումների մշակման անհրաժեշտություն: Աշխարհաճանաչման ակտիվության և ինքնուրույնության մանկավարժական պայմանների ապահովումն առավել կարևորվում է նախադպրոցական տարիքում, քանի որ այն նպաստում է մի կողմից ուսումնական գործունեության դրդապատճառների ձևավորմանն ու դպրոցական ուսումնառության արդյունավետությանը, մյուս՝ նախադպրոցահասակ երեխայի անձնավորության զարգացմանն ու ինքնահաստատմանը սոցիալական միջավայրում:

Ճանաչողական հետաքրքրությունների զարգացման հիմնահարցը մեկնաբանված է տարբեր տեսանկյուններից մի շարք անվանի հոգեբանների և մանկավարժների բազմաթիվ հետազոտություններում (Գ.Ի.Շչուկինա,Վ.Ի. Լոգինովա, Լ.Լ. Մանևցովա,Ն.Ֆ. Տալիզինա, Տ.Ս.Կոմարովա, Լ.Ի. Բոժովիչ, Ե. Վ.Բոնդարևսկայա, Ա.Վ. Զապորոժեց, Լ.Ֆ. Զախարևիչ, Լ.Ա. Վենգեր, Ն.Ի.Ժինկին, Լ.Ս. Ցվետկովա, Օ, Վիլման), սակայն դրա այժմեականությունը դիտարկվում է նաև այսօր՝ բազմապիսի տեղեկատվության աննախադեպ հոսքի գրագետ վերլուծության անհրաժեշտության պայմաններում:

Նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացման գործընթացը դիտարկվել են մի շարք տեսանկյուններից:

Համաձայն նախադպրոցական կրթության անձնակողմնորոշիչ հայեցակարգի՝ նախադպրոցական մանկավարժության գերխնդիրը՝ ինքնուրույն, սոցիալապես հասուն, միջավայրում ազատ կողմնորոշվող, ինքնազարգացման ընդունակ նախադպրոցականի ձևավորումն է, որին անհրաժեշտ է համապատասխանեցնել նաև մանկավարժական աշխատանքների բնույթը:

Նշված խնդրի արդյունավետ իրականացման համար հարկավոր են համապատասխան պայմաններ, որոնց կիրառումը պահանջում է ժամանակակից նախադպրոցական հաստատություններին բնորոշ մի շարք հակասությունների հաղթահարում, մանկավարժական մոտեցումների սկզբունքային վերանայում:

Մասնավորապես առկա են հակասություններ.

- նախադպրոցական կրթության հայեցակարգային պահանջների և նախադպրոցական հաստատություններում առայժմ գերիշխող ձևավորող դաստիարակության միջև,
- նախադպրոցականի աշխարհաճանաչման ինքնուրույնության և այն խթանելու մանկավարժական միջոցների, կազմակերպման ձևերի սակավության,

- ժամանակակից նախադպրոցականի ներուժի առավելագույն բացահայտման ու ինքնազարգացման գործընթացները խրախուսելու և մանկավարժական ներգործության ընթացքում պատրաստի, վաղուց ընդունված ձևաչափերի կիրառման միջև:

Նշված հակասությունների հաղթահարման ճանապարհին հրատապ է դառնում ինքնուրույնության, ինքնազարգացման խրախուսումը կրթական միջավայրի հարստացման ճանապարհով:

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է նրա արդիականությամբ, որը հնարավորություն է տալիս ձևակերպելու հետազոտության հիմնախնդիրն ու նպատակը: Կարծում ենք, որ նախադպրոցահասակ երեխայի ինքնուրույն աշխարհաճանաչման, իմացական հետաքրքրությունների զարգացմանը կարելի է լավագույնս նպաստել, ապահովելով զարգացնող միջավայրի բաղադրիչների համադրման մանկավարժական պայմաններ: Զարգացնող միջավայրի բաղադրիչների համադրման արդյունքում իրականացվում է ճանաչողաորոնողական գործունեություն, որն իր հերթին երեխային կդրդի ինքնուրույնության և ինքնազարգացման:

Հետազոտության նպատակն է բացահայտել և հիմնավորել զարգացնող միջավայրի դերը նախադպրոցականի աշխարհաճանաչման և ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման գործում և ստեղծել մանկավարժական պայմաններ, որոնք կապահովեն այդ գործընթացի արդյունավետությունը:

Հետազոտության օբյեկտը՝ նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման գործընթացն է:

Հետազոտության առարկան՝ Նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմաններն են:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ զարգացնող միջավայրի բաղադրիչների առկայությամբ պայմանավորված ճանաչողաորոնողական գործունեությունը կնպաստի ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը, եթե.

- բացահայտվեն նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման առանձնահատկությունները,
- նախագծվի, հիմնավորվի և նախադպրոցական հաստատության մանկավարժական գործընթացում ներդրվի զարգացնող միջավայրի կառուցվածքային մոդելը:
- մշակվեն և փորձարարությամբ հիմնավորվեն նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմաններ՝ զարգացնող միջավայրի բաղադրիչների համադրմամբ:

Հետազոտության նպատակից և գիտական վարկածից օրինաչափորեն առանձնացվել են հետևյալ **խնդիրները.**

1. ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ գիտատեսական և մեթոդական գրականություն;
2. մեկնաբանել «զարգացնող միջավայր» հասկացության էությունը և զարգացնող միջավայրի ապահովման սկզբունքները նախադպրոցական կրթական հաստատություններում;
3. բացահայտել նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման առանձնահատկությունները, ինքնուրույն աշխարհաճանաչման դերը ավագ նախադպրոցականի համակողմանի զարգացման գործում;
4. նախագծել զարգացնող միջավայրի կառուցվածքային մոդելը, փորձարարությամբ հիմնավորել դրա արդյունավետությունը նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման գործում և ներդնել նախադպրոցական հաստատության մանկավարժական գործընթացում:
5. մշակել ավագ նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմաններ՝ զարգացնող միջավայրի բաղադրիչների համադրմամբ:
6. Փորձարարական հետազոտությամբ հիմնավորել մանկավարժական պայմանների և նախագծված զարգանող միջավայրի արդյունավետությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում:

Աշխատանքի համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել.

- նախադպրոցականի ճանաչողական ակտիվության և հետաքրքրությունների զարգացման, անձի ձևավորման վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական տեսություններն ու հիմնարար դրույթները /Բ.Գ. Անանև, Ս.Լ. Ռուբինշտեյն, Վ.Ն. Մյասիշչև, Գ.Ի. Շչուկինա, Լ.Ի. Բոժովիչ/;
- նախադպրոցական կրթության ռազմավարությունն ու հայեցակարգային մոտեցումները / Շ.Ա. Ամոնաշվիլի, Ե.Վ. Բոնդարևսկայա, Դ.Ա. Բելուխին/;
- նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացման, զարգացնող միջավայրի ապահովման վերաբերյալ հետազոտությունները /Ա.Վ. Զապորոժեց, Լ.Ֆ. Զախարևիչ, Լ.Ա. Վենգեր, Ն.Ի.Ժինկին, Լ.Ս. Ցվետկովա/:

Գիտական վարկածի փորձարկման և հետազոտության խնդիրների իրականացման նպատակով օգտագործվել են հետևյալ **մեթոդները՝** հիմնախնդրի շուրջ գիտական և մեթոդական գրականության վերլուծություն, նախադպրոցական հաստատությունների մանկավարժական փորձի ուսումնասիրում, դիտում, զրույց, փորձարարական ուսուցում և վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը:

- նախագծվել և հիմնավորվել են զարգացնող միջավայրի բաղադրիչները, դրանք դիտարկվել են նախադպրոցականի ճանաչողաորոնողական գործունեության խթանման տեսանկյունից,
- բացահայտվել են նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման առանձնահատկությունները,
- մշակվել է ավագ նախադպրոցականի ճանաչողաորոնողական գործունեության, ինքնուրույն աշխարհաճանաչման խթանման մեթոդիկա, որը ներառում է.
    - նպատակային համալիր և ինտեգրված պարապմունքներ,
    - որոնողական բնույթի դիդակտիկ խաղեր,
    - ճանաչողաորոնողական գործունեության մղող զարգացնող միջավայրի կառուցվածքային մոդել,
- մշակվել են ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմանները,
- փորձարարությամբ հիմնավորվել է դրանց արդյունավետությունը ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացման գործում:

Հետազոտության տեսական նշանակությունը:

1. Տեսականորեն հիմնավորվել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման ժամանակակից մեթոդաբանությունը:
2. Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման գործում զարգացնող միջավայրի դերի վերաբերյալ տեսական դրույթները կհարստացնեն նախադպրոցական մանկավարժությունը նոր տեսական մոտեցումներով:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Մշակված ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողաորոնողական գործունեության խթանման մեթոդիկան կարող է հաջողությամբ կիրառվել մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում: Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա առաջարկված զարգացնող միջավայրի ապահովմամբ ավագ նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման մեթոդական հանձնարարականները կարող են օգտակար լինել ծնողների, մանկապարտեզի դաստիարակների և նախադպրոցական կրթության ուղղությամբ մասնագիտացող ուսանողների համար:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:

1. Նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը էական դեր է կատարում նրա ակտիվության զարգացման, արժեքային կողմնորոշումների և անձնային այլ որակների ձևավորման գործում:

2. Նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման գործընթացում զարգացնող միջավայրի ապահովմամբ ճանաչողաորոնողական գործունեության խթանման արդյունքում, ավագ նախադպրոցականը ձգտում է ճանաչել աշխարհը գործողությունների, փորձարկումների, որոնումների միջոցով, ինչն իր հերթին նպաստում է ինքնուրույն աշխարհաճանաչմանն ու սեփական հետաքրքրություններն առանց մեծահասակների օգնության բավարարելու կարողության ձեռքբերմանը:

3. Մանկավարժական նոր մոտեցումների հիման վրա մշակված ավագ նախադպրոցականների ճանաչողաորոնողական գործունեության ակտիվացման մեթոդիկայի նպատակամետ կիրառումը նպաստում է ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման և դրսևորման արդյունավետությանը՝ ապահովելով նրանց պատկերացումների, ստեղծագործական կարողությունների և աշխարհաճանաչման հետագա զարգացումը:

4. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմանները.

- զարգացնող միջավայրի կառուցվածքային մոդելը,
- նպատակային համալիր պարապմունքների կազմակերպումը, որոնք երեխային հնարավորություն կտան բացահայտելու, ընկալելու բազմաթիվ անհայտ երևույթներ և որոշ չափով բավարարելու սեփական հետաքրքրությունները,
- հետաքրքրասիրության և ճանաչողաորոնողական գործունեության խթանման միջոցները՝ անհրաժեշտ զարգացնող միջավայրի ապահովմամբ,
- ճանաչողաորոնողական գործունեության մանկավարժական ուղղորդումը:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները բազմիցս քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստերում, մեթոդական սեմինարներում, հանրապետական և միջազգային գիտամեթոդական կոնֆերանսներին և գիտաժողովներին /2010-2017թթ/:

Հետազոտության արդյունքները ներկայացվել են հոդվածների տեսքով, հիմնական տեսական դրույթների և գործնական երաշխավորագրերի ու հանձնարարականների փորձաքննությունն ու ներդրումն իրականացվել են Եղեգնաձոր քաղաքի թիվ 1, թիվ 2 և Երևանի թիվ 5 մանկապարտեզներում: Փորձարարական աշխատանքում ընդգրկվել է նշված մանկապարտեզներ հաճախող ավագ նախադպրոցական տարիքի շուրջ 130 երեխա:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունն ու հավաստիությունն ապահովված են հետազոտության ելակետային դրույթների մեթոդաբանական հիմնավորվածությամբ, հետազոտության առարկային և

խնդիրներին համարժեք մեթոդների համալիր կիրառմամբ, տեսական և փորձարարական ծավալուն նյութի վերլուծությամբ, նախադպրոցական հաստատություններում հետազոտության արդյունքների ներդրմամբ, հրատարակված գիտական հոդվածներով:

Փորձարարական հետազոտությունը իրականացվել է երեք փուլով 2010-2013 թթ. ընթացքում**:**

Առաջին փուլ /2010-2011 թթ./: Իրականացվել է ատենախոսության թեմայի վերաբերյալ գիտական և մեթոդական գրականության ուսումնասիրություն, ուսումնասիրության հիմնախնդրի ժամանակակից դրվածքի վերլուծություն և գնահատում: Առանձնացվել են այն մեթոդիկաներն ու մեթոդները, որոնք պետք է կիրառվեն գիտափորձի ընթացքում: Բացահայտվել են նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման աստիճանը, դրանց դրսևորման առանձնահատկությունները:

Երկրորդ փուլ /2011-2012թթ./: Հստակեցվել են նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանն ուղղված մանկավարժական աշխատանքի ձևերը: Մշակվել են համալիր և ինտեգրված պարապմունքներ, որոնք իրականացվել են փորձարարության համար բազային հիմք հանդիսացող մանկապարտեզներում:

Երրորդ փուլ /2012-2013թթ./: Կազմակերպվել և իրականացվել է նախատեսված փորձարարական աշխատանքը: Ընդհանրացվել և համակարգվել են փորձարարական հետազոտության արդյունքները, ստուգվել է մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը, ձևակերպվել են եզրակացությունները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, մեթոդական հանձնարարականներից, եզրակացություններից, 138 անուն գրականության ցանկից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով կազմում է 143 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հիմնախնդրի գիտատեսական և**

մեթոդաբանական հիմնավորումը» խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Ճանաչողական հետաքրքրություն հասկացության էությունը, զարգացման հոգեբանամանկավարժական վերլուծությունը» խորագիրը կրող ենթագլխում վերլուծված և լուսաբանված են նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման և այդ համատեքտում զարգացնող միջավայրի ապահովման հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական մոտեցումները, տեսական դրույթները:

Տեսական դրույթներով հիմնավորվել է, որ հետաքրքրությունները ձևավորվում և զարգանում են գործունեության մեջ, և նրա վրա ազդում են ոչ թե գործունեության առանձին տարրեր, այլ նրա ողջ սուբյեկտիվ էությունը /բնույթը, ընթացքը, արդյունքը/:

Հետաքրքրությունները, որպես անձի մի շարք հոգեկան գործընթացների միաձուլում, ձևավորվում են հատուկ կազմակերպված գործունեության ընթացքում անհրաժեշտ պայմանների ապահովմամբ;

Ճանաչողական հետաքրքրությունը, ընդգրկված լինելով ճանաչողական գործունեության մեջ, սերտորեն զուգորդվում է մի շարք միջանձնային հարաբերություններով՝ ընտրողական վերաբերմունք գիտության այս կամ այն բնագավառի նկատմամբ, մասնակցությունը այդ գործունեությանը և այլն: Ահա, առարկայական աշխարհի իմացությամբ և նրա նկատմամբ վերաբերմունքի գիտական ճշմարտությունների իմացության հիման վրա ձևավորվում է ակտիվ, կողմնակալ բնույթի աշխարհընկալում, որին նպաստում է ճանաչողական հետաքրքրությունը:

Նշվում է, որ մանկավարժական գրականության մեջ առանձնացված է ճանաչողական հետաքրքրության ձևավորման պայմանական հաջորդական փուլերը՝ հետաքրքրասիրություն, հետաքրքրություն, ճանաչողական հետաքրքրություն, տեսական հետաքրքրություն:

Ներկայացված են «հետաքրքրություն» հասկացության սահմանման բնութագրման ժամանակակից մի շարք մանկավարժների տեսակետներ:

Ելնելով այդ սահմանումներից՝ հիմնավորվում է, որ հետաքրքրությունը դեպի իրական կյանքի ճանաչում, մանկան զարգացման ամենակարևոր և հիմնաքարային հասկացություններից է:

Հայտնի է, որ ավագ նախադպրոցական տարիքում զգալիորեն աճում են երեխայի ակտիվության նախաձեռնող և փոփոխվող հնարավորությունները: Այս տարիքը կարևոր է երեխայի իմացական պահանջմունքների բավարարման համար, որն իր արտացոլումն է գտնում որոնողական-հետազոտական գործունեության ձևով՝ ուղղված նորի հայտնաբերմանը: Նախադպրոցական տարիքում ճանաչողական հետաքրքրություններն արտահայտվում են անվերջ ուսումնասիրություններով,հետաքրքիր տեղեկատվության ինքնուրույն որոնմամբ և մեծահասակին ուղղված անվերջ հարցերով: Նրանք հետաքրքրվում են

կենդանի և անկենդան բնությամբ, արտահայտում են նախաձեռնողականություն, որն ի հայտ է գալիս դիտման ընթացքում/ձգտում է իմանալ, տեսնել, շոշափել/:

Երկրորդ՝ «Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում» խորագրով ենթագլխում հիմնավորվում է, որ ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումն ու զարգացումը երկարատև գործընթաց է:

Դիտարկված և նորովի է մեկնաբանված «հետաքրքրություն», «ճանաչողական հետաքրքրություն» հասկացությունների էությունը, վերլուծված են մի շարք մանկավարժ-հետազոտողների կողմից դրանց սահմանումները:

Որպես «հետաքրքրություն», «ճանաչողական հետաքրքրություն» հասկացությունների քննարկման արդյունք՝ ներկայացված է մեր այն կարծիքը, որ հետաքրքրությունը դրդապատճառային ոլորտի բաղկացուցիչ մաս է, որն այլ դրդպատճառների հետ միասին, որոշում է անձի նպատակաուղղվածությունը:

Հիմնավորված է ճանաչողական հետաքրքրությունների կախվածությունը դրդապատճառային ոլորտից՝ որպես տեսական հիմք ունենալով մի շարք մանկավարժների տեսակետները:

Բնութագրված են ճանաչողական հետաքրքրությունների վրա ազդող գործոնները և ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման առանձնահատկությունները:

Երրորդ՝ «**Նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմանները»** խորագրով ենթագլխում որոշարկված և տեսականորեն հիմնավորված են մի շարք հետազոտողների՝ նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական ակտիվության, հետաքրքրությունների և ստեղծագործական կարողությունների զարգացման վերաբերյալ տեսակետները, ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմանները.

Չորրորդ՝ «Զարգացնող միջավայրը՝ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացման միջոց» խորագրով ենթագլխում մանրամասն ներկայացված են զարգացնող միջավայրի կառուցման սկզբունքները, բաղադրիչները, հոգեբանական բնութագիրը: Քննարկվել են զարգացնող միջավայրի կառուցման առանձնահատկությունները տարիքային տարբեր խմբերում, ինչպես նաև անդրադարձ է կատարվել միջավայրի կառուցման հիմնական դժվարություններին և սխալներին:

Ենելով մի շարք հետազոտողների կողմից առաջարկվող ծրագրերից՝ հիմնավորվում է, որ առարկայական-զարգացանող միջավայրը կազմակերպված կենսատարածք է, որն ի վիճակի է ապահովել նախադպրոցականների սոցիալ-մշակութային վարքի ձևավորումը, բավարարել երեխայի ստեղծագործական ներկա և հետագա պահանջմունքները, նպաստել ճանաչողական ունակությունների ձևավորմանը:

Միջավայրը ստեղծագործական ներուժի իրականացման միջոց է: Զարգացնող միջավայրը բացահայտում է երեխայի հնարավորությունները՝

շնորհիվ այդ միջավայրում մեծահասակի հետ շփման: Երեխան և մեծահասակը գործում են միասին և նրանց համար իրենց առարկայական միջավայրը պետք է հարմարավետ լինի:

Նախադպրոցականի ներդաշնակ զարգացման և ինքնազարգացման միտումների ձևավորման գլխավոր երաշխիքը՝ զարգացնող միջավայրի ստեղծումն ու դրա շարժունության ապահովումն է: Զարգացնող միջավայրն առաջացնում է ճանաչելու, որոնելու, սեփական պահանջմունքներն ու հետաքրքրություններն ինքնուրույն բավարարելու ցանկություն, այն իր հերթին երեխային մղում է ճանաչողական գործունեության, որն իր բնույթով որոնողական է:

Կարելի է արձանագրել, որ նախադպրոցականի աշխարհաճանաչման գործընթացի արդյունավետությունը խթանելու համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որը կնպաստի ճանաչողաորոնողական գործունեության ծավալմանը, ընդլայնմանն ու ճանաչողական ակտիվության ամրապնդմանը, այն է՝ ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանն ու ճանաչողական կարողությունների փորձարկմանը: Այսինքն՝ զարգացնող միջավայրը ճանաչողական հետաքրքրությունների զարգացման և ճանաչողական կարողությունների ձևավորման պարտադիր պայման է և արդյունավետ միջոց:

Ատենախոսության երկրորդ՝ «Նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը զարգացնող միջավայրի ապահովման պայմաններում» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «**Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորությունները ճանաչողահետազոտական գործունեության ընթացքում»** ենթագլխում հիմնավորվում է, որ նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման պայմանը նրանց հետազոտական գործունեությունն է՝ հիմնված երեխայի արդեն առկա պահանջմունքների և ճանաչողական գործողությունների կազմակերպման վրա՝ մտածողության, հիշողության, ուշադրության, խոսքի և հուզական ոլորտի հետ սերտ կապի ապահովման միջոցով:

Ստեղծագործական գործունեության կազմակերպման կարևոր ձևերից են մանկապարտեզում համալիր և ինտեգրված պարապմունքները:

Հիմնավորված է, որ գոյություն ունի ուղղակի կապ նաև ստեղծագործական գործունեության և շրջապատող միջավայրին ծանոթացման միջև, քանի որ մանկական ստեղծագործական գործունեության աղբյուր է հանդիսանում շրջապատող իրականությունը: Անքակտելի կապ կա ստեղծագործական գործունեության և խոսքի զարգացման, ինչպես նաև գեղարվեստախոսքային գործունեության միջև:

Մեր կողմից անցկացրած հետազոտություններն անմիջականորեն կապված են ինտեգրված պարապմունքների արդյունավետ կազմակերպման հետ, քանի որ նման տիպի պարապմունքները մեծապես նպաստում են ավագ

նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվեց, որ ինտեգրված պարապմունքները լավագույն միջոց են հանդիսանում ճանաչողական հետաքրքրությունների զարգացման համար: Ինտեգրված պարապմունքներն իրենց բնույթով բազմաֆունկցիոնալ են, երեխային դրդում են որոնումների և ստեղծագործական գործունեության: Ինտեգրված պարապմունքների շարունակական կիրառումն ակամայից բարձրացնում է ճանաչողական հետաքրքրությունների մակարդակը և մղում ճանաչողական ակտիվության:

Մեր խորին համոզմամբ, նպատակային համալիր պարապմունքների կազմակերպումը կխթանի ավագ նախադպրոցականների ճանաչողա-որոնողական գործունեության զարգացման գործընթացը, ինքնուրույն փորձարկումներն ու գործողությունները կնպաստեն աշխարհաճանաչմանը:

Բացահայտված և ներկայացված են զարգացնող միջավայրի նախագծման բնորոշ բացասական գործոնները, որոնք կարգավորման կարիք են զգում:

Հիմնավորվում է, որ նախադպրոցական կրթության բովանդակությունը՝ համաձայն գործող ժամանակակից հայեցակարգի, չպետք է սահմանափակված լինի արտաքին աշխարհի մասին գիտելիքների փոխանցմամբ, այն կոչված է՝ նպաստելու ճանաչողաորոնողական գործունեության ծավալմանը՝ կայուն ճանաչողական հետաքրքրությունների ձևավորվածության հիման վրա:

Ճանաչողական ակտիվությունը համարվում է արդյունավետ ակտիվության տեսակ, քանի որ ուղղված չէ հարմարվողականությանը և դիտարկվում է որպես ստեղծագործականության մղող գործունեություն:

Որպես քննարկվածի հետևություն՝ ներկայացվում է նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանն ուղղված մանկավարժական աշխատանքի ուղղությունները՝

- նպատակային համալիր պարապմունքների կազմակերպում, որոնք երեխային հնարավորություն կտան բացահայտելու, արձանագրելու բազմաթիվ անհայտ երևույթներ և որոշ չափով դասակարգելու սեփական հետաքրքրությունները,
- ճանաչողաորոնողական գործունեության խթանում՝ փորձարարության համար անհրաժեշտ միջավայրի ապահովմամբ,
- ճանաչողաորոնողական գործունեության ուղղորդում:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ՝ **«Նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ախտորոշման եղանակները, գիտափորձի արձանագրող փուլի արդյունքները»** ենթագլխում ներկայացված են ճանաչողական հետաքրքրությունների ախտորոշման եղանակները:

Արձանագրող փուլը կազմակերպելու համար իրականացվել են մի շարք աշխատանքներ:

Հետազոտության մեջ մենք կանգ ենք առնում ճանաչողական հետաքրքրությունների ախտորոշման և ուսումնասիրության հետևյալ կողմերի վրա.

- ճանաչողական ակտիվություն,
- հետաքրքրասիրություն,
- հետաքրքրության ուղղվածություն,
- հետազոտական ակտիվություն:

Ավագ նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մակարդակները պայմանականորեն որոշվեցին ցածր, միջին և բարձր ցուցանիշներով:

Երկրորդ գլխի երրորդ՝ «Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանն ուղղված մանկավարժական աշխատանքի կազմակերպման ընթացքը /գիտափորձի ձևավորող փուլ» ենթագլխում ներկայացված են փորձարարական հետազոտության հիմնական փուլի ընթացքն ու ընդհանրացված արդյունքները

Գիտափորձի ձևավորող փուլի հիմնական նպատակն էր ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացման համար անհրաժեշտ զարգացնող-առարկայական միջավայրի մոդելի, պարապմունքների և դիդակտիկ խաղերի համակարգված կիրառումը:

Նշված նպատակի իրականացմանն ուղղված մեր կողմից առաջարկվող գործողություններն են.

- ստեղծել զարգացնող առարկայական միջավայրի այնպիսի մոդել, որը կդրդի երեխային ճանաչողաորոնողական գործունեության,
- գնահատել և խրախուսել երեխայի ինքնուրույն աշխարհընկալման զարգացումը,
- ճանաչողաորոնողական գործունեության կազմակերպման միջոցով խթանել երեխաների ինքնազարգացումը և ինքնահաստատումը,
- կազմակերպել համալիր պարապմունքներ՝ նպատակաուղղված երեխաների ճանաչողական ունակությունների բացահայտմանը,
- ընտրել համապատասխան մանկական ստեղծագործություններ՝ ուղղված երեխաների աշխարհաճանաչմանը, շրջապատող միջավայրի առարկաների ու երևույթների փոխհարաբերությունների բացահայտմանը,
- ծնողների հետ կազմակերպել թեմատիկ զրույցներ, նպատակային հանդիպումներ, կլոր սեղաններ՝ երեխաների աշխարհընկալման գործունեությունն ուղղորդելու համար,
- մանկապարտեզում կազմակերպել միջոցառումներ (ավանդական տոների նշում, հանդեսներ, տոնակատարություններ)՝ նպատակաուղղված երեխաների ճանաչողական, իմացական գործունեությանը, տվյալ միջոցառման իմաստի ընկալմանը:

Ձևավորող գիտափորձի արդյունքները ներկայացված են աղյուսակի տեսքով (աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

Ձևավորող գիտափորձի արդյունքները ստուգիչ և փորձարարական խմբերի համեմատությամբ

Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մակարդակները	Ձևավորող գիտափորձի արդյունքները			
	Ստ. խումբ n=30		Փորձ. խումբ n=30	
	n	%	n	%
բարձր	7	24	23	76
միջին	5	16	3	10
ցածր	18	60	4	14

Երկրորդ գլխի չորրորդ՝ «Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունը» ենթագլխում ներկայացված են փորձարարական հետազոտության հիմնական փուլի ընդհանրացված արդյունքները:

Փորձարարական աշխատանքների արդյունքները լիարժեք արտահայտելու նպատակով գիտափորձի ձևավորող փուլից հետո ստուգիչ փուլում գնահատվել է փորձարարական խմբի ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մակարդակը զարգացնող առարկայական միջավայրի պայմաններում՝ համեմատելով արձանագրող փուլի արդյունքների հետ:

Փորձարարական աշխատանքի ընդհանրացված արդյունքները ներկայացված են աղյուսակի տեսքով (աղյուսակ 2).

Աղյուսակ 2.

Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մակարդակները

Փորձարարության անցկացման փուլերը	**Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մակարդակները**											
	ստուգողական n=30						**փորձարարական n=30**					
	ցածր		միջին		բարձր		ցածր		միջին		բարձր	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Արձանագրող	19	63	7	24	4	13	17	56	8	27	5	17
Ձևավորող	18	60	5	16	7	24	4	14	3	10	23	76
Ստուգիչ	18	60	5	16	7	24	4	14	3	10	23	76

Փորձարարական աշխատանքի ընթացիկ փուլերի (արձանագրող, ձևավորող, ստուգիչ) արդյունքները ներկայացված են նաև տրամագրի տեսքով (տրամագիր 1).



Տրամագիր 1. Գիտափորձի ընթացիկ փուլերի արդյունքները

Ինչպես երևում է աղյուսակներում ներկայացված տվյալների համեմատական վերլուծությունից՝ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման դինամիկան զարգացնող միջավայրի ապահովման պայմաններում զգալիորեն դրական ցուցանիշեր է արձանագրել:

Այսպիսով, ելնելով գիտափորձի արդյունքների վերլուծությունից,կարելի է փաստել, որ նախադպրոցական հաստատություններում մեր կողմից առաջարկվող մեթոդիկայի, զարգացնող միջավայրի մոդելի ներդրումը և մանկավարժական պայմանների ապահովումը նպաստեցին նախապրոցականների ճանաչողական հետաքրքրությունների արդյունավետ ձևավորմանը, ճանաչողաորոնողական գործունեության խթանմանը, ինքնուրույն աշխարհաճանաչմանը;

Տեսական ուսումնասիրությունները, վերլուծությունները, փորձարարական աշխատանքների արդյունքները թույլ տվեցին անելու հետևյալ **եզրակացությունները.**

1. Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման շարժընթացը նախադպրոցական տարիքում ենթադրում է անցում երեխային ի ծնե բնորոշ հետաքրքրասիրությունից դեպի կայուն իմացական ակտիվություն և ինքնուրույնություն, որոնց հիման վրա առաջանում է արտաքին առարկայական աշխարհը վերափոխելու ցանկություն: Աշխարհաճանաչման սեփական փորձը, այդ ընթացքում որոնելու, փորձարկելու և համագործակցելու անհրաժեշտության աստիճանական գիտակցումը նպաստում է նախադպրոցականի ներանձնային փոփոխություններին, որոնք իրենց հերթին բարելավում են ճանաչողաորոնողական գործունեության ընթացքը:
2. Ավագ նախադպրոցականների ճանաչողաորոնողական գործունեության համար խթան է հանդիսանում զարգացնող միջավայրը, որի բաղադրիչների

համադրումն ըստ առաջարկվող տարբերակի նպաստեց խմբի բոլոր երեխաների միաժամանակյա ներգրավմանը ակտիվ ճանաչողական գործունեության մեջ: Մասնավորապես. աշխատանքը զարգացման կենտրոններում /խաղային, արդյունավետ գործունեության, խոսքի զարգացման, ուսումնական և ստեղծագործման կամ փորձարկման կենտրոններ խմբասենյակում/ համադրվել է պարապմունքների և դիդակտիկ խաղերի կազմակերպման հետ, կրթական խնդիրների ինտեգրումն իրականացվել է խաղերի, խաղալիքների և դիդակտիկ պարագաների համատեղ օգտագործմամբ, զարգացնող միջավայրի մշտական կահավորումը պարբերաբար փոփոխվել է՝ շարժուն և ձևափոխված իրերով: Զարգացնող միջավայրի կենդանի բաղադրիչ է համարվում դաստիարակը, որի գործողությունները միտված էին նախադպրոցականների ճանաչողաորոնողական գործունեության խթանմանը:

3. Մշակվել են ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմաններ.
   - զարգացնող միջավայրի կառուցվածքային մոդել,
   - նպատակային համալիր պարապմունքներ, որոնք երեխային սովորեցնում են համակարգել առկա գիտելիքները շրջակա միջավայրի մասին, բացահայտել և արձանագրել բազմաթիվ անհայտ երևույթներ, հասկանալ սեփական նախասիրություններն ու հետաքրքրությունները,
   - կազմակերպվող դիդակտիկ խաղեր՝ ուղղված տարաբնույթ մտածական և պրակտիկ գործողությունների փորձարկմանը:
4. Ավագ նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման մեր կողմից մշակված մանկավարժական աշխատանքների արդյունքում, մասնավորապես զարգացնող միջավայրի ստեղծմամբ, արձանագրվեց փորձարարական խմբի երեխաների ինքնուրույն աշխարհաճանաչման զգալի առաջընթաց՝ որոնելու, փորձարկելու, համագործակցելու անհրաժեշտության գիտակցում:
5. Փորձարարական աշխատանքի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հետազոտության գիտական վարկածն ընդունելի է և հիմնավորված, իսկ ավագ նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանն ուղղված մանկավարժական աշխատանքների անցկացման մեթոդիկան՝ կիրառելի ժամանակակից նախադպրոցական կրթական հաստատություններում:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Խաղային հնարների կիրառումը նախադպրոցականի կյանքում «Նախադպրոցական կրթություն» Երևան 2009, 2 էջ 39-44:
2. Զարգացնող-առարկայական միջավայրի դերը նախադպրոցականի կյանքում «Նախաշավիղ» Երևան 2009, 3-4. էջ 66-73:

3. Նախադպրոցականի ստեղծագործական գործունեությունը «Նախաշավիղ» Երևան 2010, 2. էջ 33-39:
4. Նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացման մանկավարժական պայմանները «Մխիթար Գոշ» Ուսումնամեթոդական հոդվածներ Վանաձոր 2014, 1 էջ 124-130:
5. Հանդուրժողականության դաստիարակության առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոդվածներ 2015/1 էջ 178-182:
6. Особенности формирования познавательных интересов старших дошкольников в процессе познавательно-исследовательской деятельности ,,Образование личности,, N 3, 2015 , /РИНЦ/ էջ 113-119:
7. Педагогические условие развитие познавательного интереса детей старшего дошкольного возраста на примере детских садов Армении.,,Образование личности,стандарты и ценности,,Москва,2015 /РИНЦ/, էջ 83-87:
8. Предметно- развивающая среда Армянских ДОУ,,Актуалные проблемы гуманитарных и естественных наук,,N 9/80//Сентябрь/ Часть III. Москва 2015г./РИНЦ/ էջ 20-23:
9. Развитие познавательной активности детей старшего дошкольного возраста по средствам дидактических игр, The VIII International Academic Congress "Development of Countries in Asia, Africa and Europe: Past, Present and Future",Seoul, South Korea ,Seoul National University Press, 2016, էջ 323-328:
10. <<Развитие познавательного интереса дошкольников в процессе поликультурного воспитания>> The XVII International Academic Congress "History,Problems and Prospects of Development of Modern Civilization",Tokyo, Japan, 25-27 January 2016 էջ547-552:
11. Развитие творческих способностей дошкольников средствами кукольного театра Children & Schools,№1, (39)2017, Web of Science./Source Normalized Impact per Paper (SNIP): 0.503SCImago Journal Rank (SJR): 0.443 Impact factor: 1.086/ էջ 1109-1114;
12. Основные задачи психологических проблем, воздействующих на предметно-развивающей среды The VII International Academic Congress " Fundamental and Applied Studies in EU and CIS Countries", Cambridge, England, UK, 26-28 February 2017 ,Scopus и Web of Science. էջ 524-529
13. Психолого-педагогическая помощь родителям в подготовке детей к обучению в школе Воспитатель ДОУ № 4/2017 էջ 78-85:
14. Детско-родительские отношения и их влияние на личность ребенка Научные исследования 2017. № 3 (14)» – м.,2017. էջ 37-40:
15. Փողի եվ ընտանեկան բյուջեի մասին պատկերացումների ձեվավորումը նախադպրոցական տարիքում «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու թիվ 1(18) Երևան 2018, ԵՊՀ հրատարակչություն , էջ 328-333:

СИМОНЯН АННА АШОТОВНА

РОЛЬ РАЗВИВАЮЩЕЙ СРЕДЫ В ФОРМИРОВАНИИ ПОЗНАВАТЕЛЬНЫХ ИНТЕРЕСОВ У ДОШКОЛЬНИКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- „Теория и история педагогики”

Защита диссертации состоится 27-ого июня 2018 года в 12 ^{00} на заседании специализированного совета 020 ВАК <<Педагогика>> при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу адресу 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Обеспечение педагогических условий познавательной активности и самостоятельности является значительной задачей в дошкольном возрасте, так как способствует с одной стороны формированию мотивов учебной деятельности и успеху школьного обучения, с другой - развитию и самоутверждению личности дошкольника в социальной среде.

Основной вопрос развития познавательных интересов интерпретирован в многочисленных исследованиях с различных позиций, однако его актуальность особо акцентируется в условиях беспрецедентного потока разнообразной информации и необходимости его грамотного анализа.

Согласно личностно-ориентированной концепции дошкольного образования, целью дошкольной педагогики является формирование самостоятельного, социально зрелого, свободно ориентирующегося в среде, способного к саморазвитию дошкольника, характер педагогических работ соответственно следует направить в это русло.

Считаем, что развитию самостоятельности в познании мира, познавательных интересов можно оптимально содействовать путем обеспечения оптимальных педагогических условий и целенаправленного сопоставления компонентов развивающей среды. В результате сопоставления компонентов развивающей среды стимулируется познавательно-поисковая деятельность, что в свою очередь побуждает ребенка к самостоятельному миропознанию, способствует саморазвитию.

Цель исследования

Цель исследования - выявить и обосновать роль развивающей среды в формировании познавательных интересов дошкольника и предложить педагогические условия, обеспечивающие эффективность процесса.

Задачи исследования

1.Исследовать и проанализировать теоретическую и научно-методическую литературу по теме;

2.Истолковать сущность понятия “развивающая среда” и принципы обеспечения развивающей среды в дошкольных учреждениях;

3.Определить особенности формирования познавательных интересов у дошкольников, роль самостоятельного познания во всестороннем развитии старшего дошкольника;

4.Спроектировать структурную модель развивающей среды, экспериментальным путем обосновать ее эффективность в формировании познавательных интересов дошкольника, внедрить ее в педагогический процесс дошкольного учреждения.

5.Разработать педагогические условия формирования познавательных интересов старших дошкольников, используя структурную модель развивающей среды, построенную путем сопоставления ее компонентов;

6.Экспериментально обосновать эффективность разработанных педагогических условий и модели развивающей среды в формировании познавательных интересов у детей старшего дошкольного возраста .

Научная новизна

- Обоснованы компоненты развивающей среды с позиции стимулирования познавательно- поисковой деятельности дошкольника, разработана структурная модель развивающей среды;
- Выявлены особенности формирования познавательных интересов дошкольника;
- Предложена методика стимулирования поисково- познавательной деятельности и самостоятельного миропознания старшего дошкольника, включающая:
    - целенаправленные комплексные и интегрированные занятия;
    - дидактические игры;
    - методы педагогической поддержки познавательно- поисковой деятельности дошкольника;
- Разработаны и путем научного эксперимента обоснованы педагогические условия формирования познавательных интересов старшего дошкольника.

Теоретическое значение исследования

- Теоретически обоснована современная методология формирования познавательных интересов детей старшего дошкольного возраста;
- Теоретические положения о роли развивающей среды в формировании познавательных интересов старшего дошкольника обогатят дошкольную педагогику новыми теоретическими подходами.

Практическая значимость исследования

Разработана методика стимулирования познавательно-поисковой деятельности детей старшего дошкольного возраста, которая может успешно использоваться в образовательно- воспитательной деятельности детского сада.

Структура и объем диссертации - Диссертация состоит из введения, двух глав, заключения, методических рекомендаций, списка литературы/138 наименований/. Объем диссертации составляет 143 компьютерных страниц.

ANNA ASHOT SIMONYAN

THE ROLE OF DEVELOPING ENVIRONMENT OF FORMATING COGNITIVE INTERESTS OF PRESHCHOOLER

Thesis for degree of a candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 – "Theory and History of Pedagogy"

The defense of the thesis will be held at 12:00 on June 27, 2018 at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC (Higer Attestation Commission) to award scientific degree Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

Address: 0010, 17 Tigran Mets ave., Yerevan.

SUMMARY

The relevance of the research. The provision of pedagogical conditions of cognitive activity and independence becomes more significant at preschool age, as it promotes the formation of motivation of educational activity and the success of schooling on the one hand and the development and self-affirmation of the preschooler's personality in the social environment on the other hand.

The main issue of the development of cognitive interests is interpreted in numerous studies from various perspectives, but its relevance is observed even now in the context of the need for a competent analysis of an unprecedented flow of diverse information.

According to the personality-oriented concept of preschool education, the super task of preschool pedagogy is the formation of an independent, socially mature preschool child, who freely orientates in the environment and is capable of self-development. The character of pedagogical work must be adapted due to the above-mentioned features.

We think that the development of independent knowledge and cognitive interests can be optimally promoted by providing pedagogical conditions to compare the elements of the developing environment. As a result of the comparison of the elements in the developing environment, cognitive-search activity is carried out, which in turn impels the child's independence and self-development.

The aim of the research is to reveal and justify the role of the developing environment in the formation of the cognitive interests of the preschool child and to offer pedagogical conditions that ensure the effectiveness of the process.

The objectives of the research are:

1. To study and analyze the theoretical and scientific-methodical literature on the topic;
2. To interpret the essence of the concept of "developing environment" and the principles of providing the developing environment in preschool institutions;

3. To identify the features of the formation of cognitive interests in preschool children, the role of independent knowledge in the comprehensive development of the senior preschooler;
4. To design a structural model of the developing environment, substantiate its effectiveness experimentally in the formation of the cognitive interests of the preschool child and introduce it into the pedagogical activity of the preschool institution.
5. To develop pedagogical conditions for the formation of cognitive interests of senior preschoolers in comparison of the components of the developing environment;
6. To prove the effectiveness of pedagogical conditions and the projected environment in the educational process of the kindergarten by means of experimental research.

The scientific novelty of the research.

- The components of the developing environment have been noted and justified, which are considered from the point of view of stimulating the cognitive-search activity of the preschooler;
- The peculiarities of formation of the cognitive interests of the preschooler are revealed;
- A methodology for stimulating cognitive-research activity, an independent outlook of the world of senior preschooler, which includes:
    - developed comprehensive and integrated classes and didactic games;
    - structural model of the developing environment;
- The pedagogical conditions for the formation of the cognitive interests of the senior preschooler are also developed and scientifically tested.

The theoretical value of the research.

- The modern methodology of formation of cognitive interests of children of the senior preschool age is theoretically grounded;
- Theoretical provisions on the role of the developing environment in the formation of cognitive interests of the senior preschooler will enrich pre-school pedagogy with new theoretical approaches.

The practical significance of the research.

The methodology of stimulation of cognitive-search activity of children of the senior preschool age has been developed, which can successfully be used in the educational and upbringing activities of the kindergarten.

Structure and volume of the tesis.

The dissertation consists of an introduction, two chapters, a conclusion, methodical recommendations and a list of references. The volume of the dissertation is 143 computer pages.